ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

09 հունիսի 2026թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Բոռսա» ՍՊԸ-ի տնօրեն
Գևորգ Պողոսյանին

Հարգելի Գ. Պողոսյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բոռսա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2026թ.-ի ապրիլի 23-ին կնքվել է **ԱՔ-ԳՀԱՇՁԲ-26/13** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Կապալառու կազմակերպությունը ստանձնել է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ասֆալտածածկ փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (աշխատանքների կատարման ավարտ՝ **02.06.2026թ.**): Սահմանված ժամկետում աշխատանքների կատարումը չի սկսվել, մինչդեռ պատվիրատուի կողմից եղել են բազմաթիվ գրություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2026թ.-ի հունիսի 10-ից Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **2999403 (երկու միլիոն ինը հարյուր իննսունինը հազար չորս հարյուր երեք)** ՀՀ դրամի և **1999602 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար վեց հարյուր երկու)** ՀՀ դրամի չափով վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201183):**

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա կետի համաձայն «Բոռսա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**